



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426<sup>5</sup>-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>5</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 22-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումը:

2. 2019 թվականի նոյեմբերի 20-ի «Դիմումի վերաբերյալ վարույթը կասեցնելու և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշմամբ (Արդ/0009/15/19 քրեական գործով) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ որոշելու Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 426<sup>5</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրության 61, 63 և

79-րդ հոդվածներին համապատասխանության հարցն այնքանով, որքանով նոր երևան եկած հանգամանքներով վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգի նկատմամբ Օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կանոնները չկիրառելու պայմաններում անձը գրկվում է դատական պաշտպանության, արդար դատաքննության հիմնարար իրավունքների իրացման հնարավորությունից:

3. Պատասխանողը գտնում է, որ թեև Օրենսգիրքը նոր երևան եկած հանգամանքների կապակցությամբ վարույթ հարուցելը մերժելու մասին դատախազի որոշման բողոքարկման հստակ կարգը չի սահմանում, սակայն օրենսդրության մեջ առկա է համապատասխան իրավական երաշխիք (Օրենսգրքի 290-րդ հոդված), ուստի օրենսդիրն ակնկալել է այդ իրավական երաշխիքի հիման վրա համապատասխան իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը: Պատասխանողը եզրահանգում է, որ սույն գործով վիճարկվող դրույթը չի հակասում Սահմանադրությանը:

4. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմումը չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջներին: Մասնավորապես, հիշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող դրույթի կիրառման միջոցով: Մինչդեռ դիմողը վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ, ըստ էության, ներկայացրել է այնպիսի հիմնավորումներ, որոնք կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ առավելապես վերաբերում են այդ դրույթի իրավական բովանդակության մեկնաբանության և կիրառման, ինչպես նաև իրավակարգավորման ենթադրյալ բացի հարցերին:

Օրենսգրքի 426<sup>5</sup>-րդ հոդվածը սահմանում է նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթի հարուցման կարգը: Նշված հոդվածի սույն գործով վիճարկվող դրույթը սահմանում է. «Եթե հաղորդումն ստացած դատախազը նոր երևան եկած հան-

գամանքների կապակցությամբ վարույթ հարուցելու համար հիմքեր չի գտնում, ապա նա պատճառաբանված որոշմամբ մերժում է վարույթ հարուցելը: Այդ որոշումը հաղորդվում է շահագրգիռ անձանց, որոնք այն կարող են բողոքարկել վերադաս դատախազին»: Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելը մերժելու որոշումների բողոքարկման մանրամասները, այդ թվում՝ բողոքարկման, ինչպես նաև վերադաս դատախազի կողմից բողոքի քննության ժամկետները, դատական կարգով որոշումների վիճարկման հնարավորությունը՝ որպես վերադաս դատախազին դրանք բողոքարկելու այլընտրանք և այլն, սահմանված չեն ո՛չ հիշյալ հոդվածով, ո՛չ էլ Օրենսգրքի «Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով» վերտառությամբ 49<sup>1</sup>-րդ գլխով նախատեսված մյուս դրույթներով:

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանի իրականացրած իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները (ըստ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի 2020 թվականի մարտի 2-ի գրության), մասնավորապես, ցույց են տալիս, որ 2017-2019 թվականների ընթացքում Օրենսգրքի 426<sup>5</sup>-րդ հոդվածի հիման վրա վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումները վերադաս դատախազին բողոքարկվել են 7 օրից մինչև երկամսյա ժամկետներում, վերադաս դատախազի կողմից այդ բողոքները քննության են առնվել 2 օրից մինչև 15-օրյա ժամկետներում, իսկ վերադաս դատախազի կողմից բողոքը մերժելու մասին որոշումները հետագայում նաև բողոքարկվել են դատական կարգով:

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանի իրականացրած 2017-2019 թվականների դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները (ըստ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի գրության), մասնավորապես, ցույց են տալիս, որ վերադաս դատախազի կողմից բողոքը մերժելու մասին որոշումները դատական կարգով բողոքարկվել և դատարանների կողմից քննության են առնվել Օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով: Հարկ է նշել, որ բողոքաբերները որպես կանոն պահպանել են Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի պայմանը, այն է՝ մինչև բողոքները

դատարան ներկայացնելն այդ բողոքները չեն բավարարվել իրավասու դատախազի կողմից:

Չնայած այն հանգամանքին, որ Օրենսգրքի 290-րդ հոդվածն ամրագրված է Օրենսգրքի 39-րդ գլխում, որը կարգավորում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հարցերը, այնուամենայնիվ, ձևավորված իրավակիրառ պրակտիկան, ներառյալ՝ սույն դիմումով նշված կոնկրետ գործով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի 2019 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, քրեադատավարական ընդհանուր իրավակարգավորումներով նախատեսված իրավական երաշխիքների շրջանակներում չեն հանգեցնում արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների սահմանափակման կամ արգելափակման:

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի, վերջիններիս որևէ դրույթի իրավական բովանդակության բացահայտման և միատեսակ կիրառության ապահովման իրավասությունը Սահմանադրությամբ և օրենքով վերապահված է եռաստիճան դատական համակարգին, և դիմողի կողմից բարձրացված հարցերը լուծելի են օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառման համապատասխան նախադեպի շրջանակներում:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը նշում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրման սահմանադրական պահանջների կենսագործման նկատառումներից ելնելով՝ օրենսդրական զարգացումների ապահովումն Ազգային ժողովի իրավասությունն է:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին

կետը, ինչպես նաև 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>5</sup>-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**



**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

6 մարտի 2020 թվականի  
ՍԴԱՈ-50